

Մուֆթի Իպրահիմ Էֆէնտի պաշտօնանկ եղաւ եւ այդ պատիւը ստացաւ Սատիք Էֆէնտի: Ժամանակ մը յետոյ, Յիսուսեանները, կաշառած ըլլալով Կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքը, որ դեռ իր աթոռը չէր դացած, օժանդակութեամբ քանի մը կաթողիկներու համակիր քահանաներու, հաւատադարձութեան սկսան բաւական յաջողութեամբ, նոյնիսկ կըրցան թուրքերէն քարոզել կարգ մը հայ եկեղեցիներու մէջ, երբ յանկարծ նախորդէն ալ աւելի սաստիկ փոթորիկ մը բարձրացաւ հակակաթողիկներուն կողմէ նորադարձներուն դէմ: Չայրոյթը առաջ եկած էր ի տես նորադարձ հայոց իրենց հօտին մէջ կատարած հոգեւորական նրաւաճումներուն: Նախորդներուն հետ ի նորոյ ամբաստանեցին Տէր Յովհաննէս (Չմիւռնիացի) եւ Տէր Յովակիմ յիշեալ երկու պատրիարքները, եւ Տէր Կոմիտաս մը, Պապին հաւատարիմ ըլլալուն համար, որուն կրօնքը, ըսին անոնք իրենց կը սորվեցնէ հալածել եւ այրել բոլոր անոնք, որոնք հակառակ կարծիք ունին, յատկապէս մուսլիմաններուն դէմ մղելով յաւիտենական եւ անոզոք պատերազմ եւն.: Նոյն ատեն ձեւացուցին, որ իրենք ըստ ստացած են Քիոսէն, Մէսինայէն եւ Ճէնովայէն, թէ Յիսուսեանները առեւանգած են Աւետիք պատրիարքը: Ատոր համար դործածեցին հաւատադարձ կարգ մը մարզիկ, որոնք (Աւետիքի) բարեկամ եւ Փրանկներուն թշնամի ձեւանալով՝ ստիպելով անոր խորհուրդ տուած էին, որ երբ յեղափոխութեան (Մուստաֆա Բ.ի դէմ) ժամանակի իր ձերբակալութենէն յաջողի ազատիլ, ժամանակի մը համար պահուի՝ խուսափելու համար Մուֆթի Ֆէյզուլայի հետ իր ունեցած բարեկամութեան եւ անոր իր մօտ ունեցած դրամի համբաւին իրեն պատճառելիք նեղութենէն եւ տառապանքէն: Այդ պատճառաւ իրեն առաջարկեցին իրենց ծառայութիւնը, զոր ան (Աւետիք) կ'ընդունի, եւ կ'որոշուի Կանտիան (Կրետէի մէջ) իրեն ապաստանարան: Ու այս կեղծ բարեկամ-

ները կամ խորհրդատուները, իբր թէ զինքը հետապնդում է եւ հարցաքննութեանէ ազատելու համար, զինքը հասարակ մարդու մը պէս ծպտած կը դնեն Փրանսիանսական կամ սպանիական նաւ մը, որ Փրանսական դրօշը կը կրէր եւ յաջող հովով դէպի այդ կղզին (Կրետէ) կը զրկեն: Սակայն, ատոր տեղ զինքը ուղղակի Մէսինա կը տանին, ուրկէ նաւապետը Փալէրմօ մարդ կը զրկէ նամակներով Ղալաթիոյ Յիսուսեաններէն, Փալէրմոյի հաւատաքննիչին ուղղեալ: Վերջինս իր կարգին երկու պաշտօնեաներ կը զրկէ եւ պատրիարքը բերել կուտայ: Մօրուքը շատ անարդանքով կը կտրուի (ըստ ամբաստանող հակակաթողիկներուն), եւ ան կը բանտարկուի Սրբազան Պաշտօնատան բանտին մէջ, հոն կը մնայ երեք ամիսէ աւելի եւ անկէ ալ Մարտիիոյ թիարանը կը փոխադրուի, իբր Փրանկ Յիսուսեաններու թշնամութեան զոհ մը, թէեւ անոր հետ չեն վարուի բայնպէս, ինչպէս ուրիշ հայերու հետ Կ. Պոլսոյ թիարանին մէջ, այլ զայն կը բռնադատեն աշխատիլ որպէս ամենաոճրագործ զերի մը, վատթարագոյն հացով եւ ջուրով ապրելով, եւն. »:

«Հակակաթողիկները չբաւականանալով տարածել այսպիսի տեղեկութիւններ կամ հաշուետուութիւններ, սուտ թէ չիտակ, զանոնք խոչորցուցին եւ յայտնեցին Դրան տրուած յիշատակազրի մը մէջ: Անոնք նորոգեցին կամ կրկնապատկեցին նաեւ նոր կաթողիկներու դէմ իրենց հալածանքը, Յիսուսեաններուն դէմ մեծ սպառնալիք ըրին, թէ զիրենք երկրէն պիտի վտարեն, եւն., եթէ զինքը (Աւետիքը) ետ չբերեն: Վեգիբն ինքը Mr. De Ferriol-էն պահանջեց զայն (Աւետիքը) իբր Սուլթանին հպատակը: Նորին Բարձրութիւնը պատասխանեց, որ այդ մասին ոչ մէկ ծանօթութիւն ունի, եւ կը խորհի, թէ միայն թշնամիներու հնարած պատմութիւններ են ատոնք: Այսու հանդերձ Վեգիբը ըրտեսներ կամ տեղեկատուներ զետեղեց՝ զիտելու համար բոլոր այն հայերը, որոնք կաթողիկ եկեղեցիներ